ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» սեպտեմբերի 2012թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26–ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշման 1-ին կետով հաստատված

1) N7 հավելվածում «Հարթենյան Սամվել -Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Հարթենյան Սամվել - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով, իսկ «Կանցյան Ռազմիկ - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ-իրավաբան» բառերը փոխարինել «Կանցյան Ռազմիկ - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով.

2) N8 հավելվածում «Գասպարյան Մելիք - Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար» բառերը փոխարինել «Խոջայան Ռուբեն - Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» բառերով, «Խալաֆյան Սերգեյ - Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Աբրահամյան Անի-Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական

ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ» բառերով, «Մկրտչյան Արամայիս» բառերը փոխարինել «Պապիկյան Վահագն» բառերով, «Ղազարյան Գայանե - հոգեբան» բառերը փոխարինել «Խաչատրյան Լիլիթ - Առողջության և կրթության հայկական կենտրոնի հոգեբան» բառերով, «Մելոյան Անդրանիկ – Հայաստանի Հանրապետության ոստիկանության Նոր Նորքի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի տեսուչ» բառերը փոխարինել «Մկրտչյան Ֆելիքս – Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորք բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի տեսուչ» բառերով, «Քալանթարյան Արմինե - «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի մանկական պոլիկլինիկայի բաժանմունքի վարիչ» բառերը փոխարինել «Արամյան Վարսիկ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի մանկական պոլիկլինիկայի վարիչի տեղակալ» բառերով.

3) N12 հավելվածում «Կարապետյան Հայկազ» բառերը փոխարինել «Մանուկյան Արտաշես» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26–ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշմամբ հաստատվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը:

Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի աշխատակազմի ղեկավարին կից հանձնաժողովի անհատական կազմում համապատասխան փոփոխությունը պայմանավորված է աշխատակցի աշխատանքից ազատվելու հանգամանքով, իսկ Մալաթիա -Սեբաստիա վարչական շրջանի աշխատակազմի ղեկավարին կից հանձնաժողովի անհատական կազմում համապատասխան փոփոխությունների կատարումը պայմանավորված է հանձնաժողովի անդամ հանդիսացող աշխատակիցների համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնների փոփոխության հանգամանքով:

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի աշխատակազմի ղեկավարին կից հանձնաժողովի անհատական կազմում համապատասխան փոփոխությունները պայմանավորված են նրանով, որ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ Մելիք Գասպարյանը ազատվել է աշխատանքից, հանձնաժողովի անդամներ՝ Սերգեյ Խալաֆյանը, Գայանե Ղազարյանը և Անդրանիկ Մելոյանը տեղափոխվել են այլ աշխատանքի, Արամայիս Մկրտչյանը ազատվել է աշխատանքից, իսկ Արմինե Քալանթարյանը աշխատանքի ծանրաբեռնվածության պատճառով չի կարող իրականացնել հանձնաժաղովի անդամի պարտականությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ